Կ-860²-09.02.2021-ԱՍ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 5-րդ գլուխը լրացնել 47.**28.** հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 47.28. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը

1. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

~~2. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:»:~~

Հոդված 2. Օրենսգրքի 17-րդ գլխի 230-րդ հոդվածում ~~վերնագրում և ողջ հոդվածում «Առողջապահական տեսչական մարմին» բառերը փոխարինել «Առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով. իսկ~~ «47.18-47.26-րդ,» բառերից հետո լրացնել «47.28.-րդ,» բառերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 11-րդ գլուխը **լրացնել 157.16.** հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 157.16. Բնակավայրերի նախագծման ու կառուցապատման, բնակելի, հասարարակական արտադրական նշանակության շենքերի և շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծման, շինարարության և վերակառուցման դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը չպահպանելը՝**

1. բնակավայրերի նախագծման ու կառուցապատման, բնակելի, հասարարակական արտադրական նշանակության շենքերի և շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծման, շինարարության և վերակառուցման (հանրային նշանակության շենքերի եւ շինությունների դեպքում նաև հիմնանորոգման) դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը չպահպանելը՝ ~~նախագծողի, կառուցապատողի, համայնքի ղեկավարի նկատմամբ՝~~

3. առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից երեքհարյուրհիսունապատիկի չափով:

4. տուգանքի նշանակումից հետո մեկ տարվա ընթացքում սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը կամ չվերացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 17-րդ գլխի 244[11] հոդվածի 1-ին մասում «157.1-157.14-րդ» թվերից հետո լրացնել «և 157.16.» թիվը, 1-ին կետում՝ «հարյուրապատիկից բարձր չափով,» բառերից հետո՝ «157.16.-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի~~երկուհարյուրհիսունապատիկի~~ հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի

չափով,» բառերը, 2-րդ կետում՝ «հարյուրապատիկի չափով,» բառերից հետո՝ «157.16.-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի չափով,» բառերը:

~~**Հոդված 3.** Օրենսգրքի 5-րդ գլուխը լրացնել 47.**28.** հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~**«Հոդված 47.28. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը**~~

~~5. Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը խախտելը~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև երեսնապատիկի չափով:~~

~~6. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:»:~~

~~**Հոդված 4.** Օրենսգրքի 17-րդ գլխի 230-րդ հոդվածի վերնագրում և ողջ հոդվածում «Առողջապահական տեսչական մարմին» բառերը փոխարինել «Առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով, իսկ «47.18-47.26-րդ,» բառերից հետո լրացնել «47.28.-րդ,» բառերը:»:~~

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ ~~3-րդ~~ 1-ին և 2 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի սեպտեմբերի 1-ից: